

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasse
N° 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիյ համալսարանի 12 փրակի
» Վեցամսեայ 6 »
Արսասահմանի» տարեկան 14 »
» Վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռյակի դրվել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՒՄ (ՊԱՌԵԿԱՐԻՍ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խնայարարական ուղղեալ գրութիւնք
էս լին զրկուիւր եւ յարմար դաստիարակ-
ները միայն կը հրատարակուին անբող-
քովիս կամ մասամբ:
Մանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի, փոխարեւը կանխիկ:

ՄԷԿԻՆ ՏԵՂ ՀԱՉԱՐ ՀԱՉԱՐԻՆ ՏԵՂ ՄԷԿ

Մեր նախընթաց թուով դարա-
վերջիկ կատակներ վերնագրին տակ
ըստ կարելոյն պատկերացուցած
էինք թուրք կառավարութեան
Պէրլինի դաշնագրէն ի վեր հայոցս
վրայ ի գործ դրած վայրագու-
թիւններն ի շնորհս Եւրոպայի
թոյլ, շահագէտ եւ անհամարաշխ
քաղաքականութեան: Ասով հարց
մը ծագած էր թէ՛ «արգեօք Եւ-
րոպան թուրքին բիրտ կատակնե-
րուն ընդ երկար հանդիսատես պիտի
ըլլայ թէ ոչ»: այս հարցին կը
շանանք պատասխանել:

Մենք այս 21 տարիներու ըն-
թացքին պատրանքի եւ անհամե-
մատելի կորուստներու ենթարկուե-
ցանք, մանաւանդ վերջին 7-8
տարիներու մէջ: Ըրինք ինչ որ կըր-
նայինք մեր վրին վրայ ծանրացող
լուծը թօթափելու, մեր դառն վի-
ճակը բարեփոխելու եւ մեր թշնա-
մին չեզոքացնելու համար: Դիմե-
ցինք բռնեցքի, սուրի, հրացանի
եւ վերջապէս ռումբի ալ: Բայց այս
ամէնի հետեւանքը այնչափ ծան-
րակշիռ եղաւ որչափ չէր կարելի
երեւակայել: Մենք տուժեցինք
նիւթապէս եւ ֆիզիքապէս, մեր
հակառակորդն ալ սոյն տեսակէտ-
ներով առաւել կամ նուազ տուժեց:
Իսկ մենք մեր շարժումներով ինչ
որ շահեցանք նա չի կարողացաւ
զայն շահիլ, այլ ընդ հակառակը
կորսնցուց: Մեր շահը բարոյա-
կան շահն է: մենք ներկայ եւ ա-
պագայ սերունդին պարզեցինք թէ՛
մեր մարդկային ու տարրական ի-
րաւունքները ստանալու համար
մեզմէ անհամեմատ զօրեղ ուժի մը
դէմ գիտցանք խիզախել, թէպէտ
եւ նիւթապէս եւ ֆիզիքապէս ին-
կանք, բայց բարոյապէս կրցինք
գրաւել այն պատուանդանը, ուր
մեզ վիճակակից ազգաց եւ ոչ մին
չէ կարողացած ոտք դնել, եւ ուրիշ,
այդ բարոյական պատուանդանի
բարձունքէն, մենք կը գիտենք
ամբողջ քաղաքակրթեալ աշխարհը՝
ալ մեր հետ ունենալով՝ մեր հա-
կառակորդի բարոյական անկումը
ու գահավիժումը:

Այո՛, թուրք պետութիւնը այսօր
այնպիսի անկեալ վիճակ մը ու-
նի որչափ չէ ունեցած եւ ոչ մէկ
պետութիւն: այնպէս որ նիւթա-
կանը բարոյականէն զանազանող
ամէն մի օտարական միշտ տրա-
մագիր է հայ անուան նուիրել իւր
համակրանքը յայտնող ծաղկեփունջ
մը, դափնի մը: Իսկ թուրքին,
թուրք պետութեան, թուրք մը,
նզովք մը, արհամարանք եւ նոդ-
կանք: Պատմութիւնն ալ, ապա-
գայ սերունդն ալ նոյնը պիտի ընէ:
Ահա՛, հոս է մեր շահը եւ այս է
մեր յաղթանակը բարոյական, ի-
տէպական եւ վերջապէս պատմա-
կան, այսինքն ապագայ սերունդեան
տեսակէտով:

Մեր եւ թուրք կառավարու-
թեան միջեւ ծագած քաղաքական
դէպքերու այս վերջին հոլովումը
որչափ բարոյական աշխարհի հո-
գին ու սիրտը մեզ մօտեցուց, այն-
չափ եւ աւելի ալ թուրք պետու-
թեան անկումը փութացուց: Կա-
րող ենք ըսել, եւ պէտք է զայս
ընդունել իբրեւ ճշմարտութիւն:
Ըսնի որ արդէն իսկ սկսած են
Եւրոպայի նոյն իսկ կիսապաշտո-
նական թերթերն բացարձակապէս
պօռալ, թէ «Եւրոպան գիտէ հաւ-
բերել բայց չի մոռնար երբեք իր
յուշատետրին մէջ արձանագրել ա-
մեն ինչ որ կը գործուի, ինչպէս
Հայաստանի ջարդերն, եւ օր մը
թերեւս աննշան պատճառ մը ա-
ռիթ տայ բոլորի հաշիւն միաժա-
մանակ պահանջելու, Սուլթանը
այս գիտնալու եւ զգուշանալու է
քաղաքակրթ աշխարհի վրէժ-
խնդրական ոգին գրգռել»:

Թերթերու առ եւ ասոր նման
խօսքերն բացորոշ ապացոյցներ են
թէ Հայոց ջարդերն ամենակարե-
ւոր մէկ զանգուածը կը կազմեն
Սուլթաններու գահին տակը զե-
տեղուած այն ռումբին՝ զոր պայ-
թեցնելու համար փորրիկ կայծ մը
բաւական է: Ինչպէս երկու գեր-
մանացի միսիօնարներու սպանումը
բաւական եղաւ Չինաստանի բա-
ժանման, այն Չինաստանի որ եր-
կու տարի առաջ Ճաբօնացիներէ
չարաչար յաղթուելէ վերջ ալ իւր
ամբողջութիւնը չէր կորուսած:

Սա կը նշանակէ թէ Եւրոպան
երբեմն հազարին համար մէկ չի
գործեր, բայց երբեմն ալ մէկին
տեղ հազար կը պահանջէ: պայ-
մանաւ որ իր շահը ներէ եւ պայ-
մանաւ որ միտքերը կանխաւ պատ-
րաստուած ըլլան: Այս երկրորդ
պայմանը արդէն իւր կատարելու-
թեան մէջն է ի շնորհս Հայաստա-
նի ջարդերուն: Իսկ առաջինը քա-
ղաքական հանգամանքներու փո-
փոխական ընթացքի ծնունդը պիտի
ըլլայ, որ արդէն երկունքի մէջ է:
Թ. Գ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑ

Ի ՂԱԼԱՍՍԱՐ (Պարսկաստան)

1894 ին Ամերիկայից վերադարձել էի
Պարսկաստան եւ նպատակս էր Ուրմի-
ում մի Որբանոց հիմնել վարս հայ ան-
տէր եւ խղճալի երակաւներին: Այդ նը-
պատակը իրագործեց, սակայն անց-
եալ 1897 թ. ամառը երբ գերմանական
Հէլֆրուստի ակէնդ, Հէր Հանց Թի-
շըր Ուրմիից հրաւիրեց ինձ Ղալասարի
որբանոցը հաստատելու ուր 50 ի չափ
մեծաւ մասամբ Աղբակեցի ողբացեալ
երկսեռ հայ երակաւք հետզհետէ պա-
տապարան եւ ասպնջականութիւն գը-
տան: Տարւայ վախճանին ընկերու-
թեան տիրէկտոր Տօքթ. Լէքսիուսը ինձ
յայտնեց իր կատարեալ գոհունակու-
թիւնը: վստահութիւնը եւ շնորհակա-
լութիւնը գործի բարւոք ընթանալուն
եւ յառաջդիմութեան մասին: Ներկայ
տարւայ սկզբում, Պոստօր Թօն Բէրգ-
ման անուն մի գերմանացի յաջորդեց
Հանց Թիշըրին իբր ներկայացուցիչ
Հէլֆրուստին, եւ մենք էլ Պարսկաս-
տանում նոյն ընկերութեան ունեցած
կայաններին հետ որք են՝ Ուրմի, Մա-
քու, Սալմաստ եւ Ղարասաղ ենթարկ-
ւեցինք նրա անմիջական եւ լիազօր
վարչութեանը:

Ղալասարի ժողովուրդը եւ մենք գոհ
եւ ուրախ էինք որ ունեցանք մի աղ-
նական մարդ, ինչպէս ցոյց է տալիս
Պ. Բէրգմանի «Թօն» մասնիկը, իբրեւ
տեսուչ Որբանոցին, եւ պատուում, մե-
ծարոււմ, հիւրասիրում էինք նրան ա-
մենայնիւ: Բայց շատ երկար չտեսեց
յայտնեց եւ անհերքելի փաստերով ա-
պացուցեց որ Պոստօրը բոլորովին
անարժան է եղել թէ այդ պաշտօնին
եւ թէ վախկած համակրութեան եւ
վստահութեան՝ քաղաքական լուրջ պա-
ճառներով: Օտարականի մը նիստու-
կացը, գիւղ տեղում մանաւանդ, ու-
շաղթութեան առարկայ կը լինի ամեն
տեղ, այդ բանը բոլորովին մտահան

արել էր Պ. Թօն Բէրգմանը եւ շուտով
կրեց հետեւանքը: Յուզեց հասարա-
կութիւնը եւ գրգռեց ազնական դա-
սակարգը նրա յանդգնութեանը համար:
ուզում էին դիմել ծայրայեղ միջոցներին:
պէտք էր նկատողութեան առնել սա-
կայն գերմանական ընկերութեան պա-
տիւը այդ ցաւալի դէպքում: միջամը-
տեցի եւ յաջողեցայ հանդարտեցնել
յուզումը:

Ապրիլ 8/20 ին հեռագրեցի Տօքթ.
Լէքսիուսի պատահած անցքի մասին
յայտնելով թէ անհրաժեշտ էր հեռա-
ցնել Բերգմանին իսկոյն եւեթ, ապա
թէ ոչ սքանալ անխուսափելի կը լի-
նէր: Հայոց բարեկամ եւ պաշտպան
ճանաչած մեծանուն գովաւոր, սակայն,
այստեղ յայտնեց իրա բուն գոյնը: նա
փոխանակ քննելու եւ իմանալու բաց-
ւած փափուկ խնդիրը, վեր առնում
նոյն իսկ Բէրգմանից հարցնում է թէ
ստոյգ է ամբաստանութիւնն, նա էլ
իսկոյն պատասխանում է թէ բոլորու-
վին անհիմն է: Դա մի նոր գիւտ է,
հարցեր, խնդիրներ եւ վէճեր առանց
երկարատեւ ձանձրալի քննութեան
լուծելու, հարցրէք միշտ ամբաստա-
ւածից եւ վճռած է հարցը: Տօքթ.
Լէքսիուսը արժանի է արդարեւ մեծ
փառքի այս մեծ գիւտի համար: Տօկ-
տօրը այնուհետեւ հրամայում է իսկոյն
եւեթ դադարեցնել ինձ պաշտօնից: Իսկ
Բէրգման մնում է նեղ դրութեան մէջ
եւ չէ գործադրում հրամանը վախնա-
լով ժողովուրդի կատաղութիւնից եւ
սկսում է էնթրիզաների եւ խաբէու-
թիւնների դիմել, կանչում է Ուրմիից
Շամաշա Դաւիթ Իսմայէլ անուն մի
հայատեաց կեղծաւոր Ասորուն եւ ան-
գաղար հաշտութիւն է առաջարկում:
նորից յուզում է Ղալասար եւ միջանի
ժողովներ են լինում, վերջապէս որոշ-
ւում է որ գիւղին համայնքը դիմէ
ուղղակի Տօքթ. Լէքսիուսին, եւ Մա-
յիսի 5 ին հեռագրում են խնդրելով հե-
ռացնել Բէրգմանին իրանց գիւղից ի
սէր Աստուծոյ: Սրախողաղ Հայաս-
տանի վրայ կոկորդիլոսի արցունքներ
թափող մեծահոգակ տօկտօրը արհամա-
րում է մի ամբողջ հասարակութիւնը
եւ բոլորովին անպատասխանի ու ան-
հետեւանք է թողում նրանց խնդիրը:
Իսկ այժմ կատաղած վեր առնում է
հրամայում է Մայիս 6 ի հեռագրով իր
արժանաւոր ներկայացուցիչ Բէրգմա-
նին՝ իսկոյն եւեթ պաշտօնանկ անել
«Զրպարտիչ Պաղտասարեանին»: եւ դը-
րանով խեղճ պատօրի վիճակը եւ գոր-
ծերի դրութիւնը աւելի վատթարա-
ցրեց նա: «ազնական» պատօրը չէ
համարձակում նաեւ այս բացարձակ
հրամանը ի գործ դնելու եւ միայն ամսի
9 ին վերջապէս յայտնում է վճիռը պա-
հանջելով որ Որբանոցը յանձնեմ եւ

դուրս գամ, ես համակերպելով հրամանին 5 օրուայ միջոց խնդրեցի կարգադրութիւն անելու, իսկ Բէրգմանը հէնց հետեւեալ օրը յանկարծ վախից մեկնեց Ղալասարից դէպի Դալմէզ: Ահա այդ օրից Տօքթ. Լէքսիուսը պատժել է Ղալասարի Որբանոցը իր 60ի չափ պատսպարեալներով եւ մի սեւ փող չէ ուղարկում առօրեայ ծախուց համար, եւ այդ մեծ քաղմութիւնը խընամում եմ ես իմ անձնական փողով մինչեւ Տօքթ. Լէքսիուսը որբեր որդեգրող բարեկամներից մեծ գումարներ է ստանում:

Իսկ դու, ինչ ես տեսնում, հա՛մ ժողովուրդ, այս բոլոր ցաւալի անցքերում եւ դարձուածքներում, ճշմարիտ չէ՞ միթէ անմասն հայրենազոհ բանաստեղծին խօսքը «Օտարն, ա՛ն, միշտ է օտար»: Եւ ինչպէս յանձնում ենք մեր ազգի խղճալի երկսեւ որբերի բախտը այդպիսի մարդկանց, որոնք մինչեւ անգամ համարձակում են իրանց խնամոց յանձնուած հայ որբերին գնել օսմանեան հիւպատոսների հովանաւորութեան տակը, քանզի այս բոլոր դէպքերից յետոյ Տօքթ. Լէքսիուսը նշանակում է այդ ապիրատուն մշտակայ իրագոր ներկայացուցիչ գերմանական ընկերութեան Պարսկաստանում եւ համաձայնութիւն գոյացնում է Օսմ. Շահ-բէնտէր Բիզա Բէկի հետ, ինչպէս որ պարծենալով հռչակում է այստեղ ինքը, Բիզա Բէկը, որ այս քանի օր է Սալմաստ է եկած, որ մի մեծ որբանոց է հաստատել Խոյում եւ դրուի նրա անմիջական հսկողութեան տակ եւ արդէն 34 հայ որբեր ընկել են այդ նոր սարքած ուսկանում, նա կամենում էր նաեւ այնտեղ տանել Ղալասարի Որբանոցի 50 երկսեւ սաներին, բայց նրանք վճռականապէս մերժում են գընալ նրա մօտ հասկանալով թէ ինչ է լինելու իրանց վիճակը մի այդպիսի գաղափարից: Գալի անողոր ճիրաններում ընկելիս Պահնէք, խնամե՛նք ուրեմն մեր որբերին մեր սեփական հաստատութիւններում եւ փրկենք այդ խնդրանքների հազար եւ մի սպառնալից վտանգներից, որոնց նրանք միշտ

պէտք է ենթարկւին օտարի հացը ուտելիս:

Հա՛յ ազգ, հա՛յ հասարակութիւն, հա՛յ բարերարներ, ձեզ են դիմում Սալմաստի Ղալասար գիւղի Որբանոցի 50 խղճալի սաները, արցունք յայնչուհի ինչպէ՛ս յանձնեմ ես այդ անմեղ զոհերին մի օտարին որ ծաղրելու է նրանց մերկութիւնը, ինչպէ՛ս հողում եւ պատսպարեմ ես նրանց քանի որ նիւթապէս անկարող եմ ինչպէ՛ս տեսնեմ ես նրանց փողոցներում մերկ եւ բոկոտն քաղցած եւ հիւանդ թափառելիս, քանի որ այդ է լինելու նրանց անխուսափելի վիճակը եթէ չհասնի մեզ օգնութիւն ընդ հուպ: Յիշեցէ՛ք եւ միտք բերէ՛ք այդ որբերը մեր նահատակուած, զոհուած, մորթոտած եղբայրների եւ քոյրերի գաւակներ են եւ մենք չենք կարող անտարբեր մնալ նրանց մասին, մեր սուրբ եւ անսթիտելի պարտականութիւնն է օգնել նրանց, «ուր կամք կայ, անդ կայ նաեւ ճամբայ» ասում է Ամերիկեան առածը. թող կամք ունենանք, ուղենանք օգնութեան ազնիւ ձեռք կարկառել այդ զոհաբերներին եւ շատ հեշտ պիտի լինի մեզ որդեգրել մի մի որբ ազգային որբանոցներում, որոնց թիւը հետզհետէ բազմանալով այլ եւս օտարին սպաւրէզ պիտի չմնա իր ուսկանը հայ որբերով լեցնելու: Օգնեցէ՛ք Ղալասարի հայ որբանոցին, նրանք որ կարող են թող որդեգրեն մի մի որբ վճարելով 100 բուբլի. իսկ թող ամենքը իրենց լուծմանը գտնեն այս ազգային բարեսիրական հաստատութեան տարտակ գանձանակը, որպէս զի յարատեւ է եւ լինի մի ապաստան բաղուն խղճալի հայ որբերի որոնցմով լիւն է դեռ Ատրպատական: Ազգիս Վեհափառ Հայրապետը արդէն միշտ ցանկանում է որ այս տեսակ ազգային բարեսիրական հաստատութիւններ ծաղկին եւ բարգաւաճին ամեն տեղ եւ այս պատճառով Նորին Ս. Օծութիւնը հետեւեալ յանձնարարականով բարեհաճեց քաջալերել մեզ այն օրից երբ ոտք կոխեցինք Պարսկաստան մերովսանն աշխատելու ազգային այս խոպան դաշտում:

Ամենէն շատ կը սիրէր անգղիական զրականութիւնը. լուրջ հետաքրքրութեամբ եւ անյազ հաճութեամբ մը կը վերծանէր այն մեծ խորհողները որոնք կը թեցին բազմաթիւ սերունդներ եւ որոնք մանաւանդ երեւցան վերջին 60-70 տարիներու միջոցին մէջ:

Կը ճանչնար անիկա Տիգրէնտը, պաշտպան մատաղ մանուկներու, որոնց չափ ոչ ոք բուռն կերպով կ'զգայ սիրելու եւ սիրուելու երջանկութիւնը, ընտանեկան կեանքի անխառն բերկրութիւնը: Յափըշտակութեամբ կը զմայլէր այն խանդոտ երեւակայութեան վրայ որով Տիգրէնտ՝ Դաւիթ Գօթերֆիլտը զրեց եւ որուն զրչին տակ առարկաները իր անձնաւորութիւններուն խորհրդոց գոյնը կ'առնէն, ինչպէս կ'ըսէ Իբրուիդ Թեն, ճշմարիտ նկարներ կարծես, ուր ընտանեկան յարկի երջանկութիւններն կը պատկերանան ամենէն քնքուշ, ամենէն վառ գոյներով:

Կը ճանչնար նոյնպէս Սաքրէյը որ տիրութեամբ կը գիտէ իր ժամանակի անգղիական ընկերութեան եւ ազնուականութեան ծաղրելի կողմերը ու իր Մոպսնորու զրբին մէջ

«Առ Վիճակաւոր Առաջնորդն Հայոց Ատրպատականի»:

«Ըստ պատուիրանի Վեհափառ Հայրապետի ազգիս, Դիւանն հաղորդէ Ձերում Սրբազնութեան զի մատուցողն թղթոյս հայազն ուսումնական երիտասարդ Պ. Միհրան Բաղդասարեան, անձն վստահելի եւ քաջածանօթ, Նորին Վեհափառութիւն ցանկայ ի սահմանս Պարսկաստանի բանալ զազգային Որբանոց, միթարեալ վասն այս օրինակ մարդասիրական եւ հասարակօգուտ ձեռնարկութեան բարեսիր երիտասարդիս՝ Վեհափառ Հայրապետն զիտակ գորով բարեսիրութեան Ձերում պատուիրեաց Դիւանիս յանձնարարել Ձերում Սրբազնութեան զՊ. Միհրան Բաղդասարեան եւ միանգամայն զազգուտ ձեռնարկութիւն նորին. եւ հաւատայ, զի դուք ոչ զլաւիւք ընձեռնել զկարեւոր հովանաւորութիւն եւ աշակցութիւն Ձեր, զի ձեռնարկութիւնն այս յաշնդութիւն գտցէ եւ արգիւնաւոր լինիցի ի փառս Աստուծոյ, ի միւթարութիւն ամենայն բարեսիրաց յօգուտ անխնամ եւ թշուառ որբոց եւ ի փառաւորութիւն անուան հիմնադրի, որոյ գործն արժանի է ամենայն համակրանաց եւ օգնութեան:

(ստ.) Խորէն Եպս. Սեփական

Նորին Ս. Օծութիւնը քաջ ճանչնալով ինձ, որպէս մի ձեռնհաս անձ, յանձնարարում է, եւ ես վերջի ցաւալի դէպքերից խրատուած եւ ստիպուած, անապօր դիմում եմ ազգիս ներկայ հրաւերով եւ յանձնարարութեամբ խնդրելով անմիջական օգնութիւն եւ պաշտպանութիւն, մեր այս դուզնաքեայ ազգային ձեռնարկութեան Որբեր որդեգրողների, ինչպէս նաեւ բարեսիր ներհարաւորների անունները շարունակ կը հրատարակւին ազգային լրագիրներում, որբերի նկարները կ'ուղարկւին որդեգրողներին եւ եռամսեայ հաշիւ եւ տեղեկագիր կը ներկայացւի բարեսիր հասարակութեան լրագրաց միջոցով. զրամական որ եւ է նպաստներ կամ իրեղէններ ինչպէս նաեւ գործի յառաջդիմութեան մասին որ եւ է թելադրուած:

անխնայ կը ձաղկէ զանոնք. կը սիրէ պատուել կեղծաւորութեան քողը, բարեպաշտիկ Անգղիոյ ա. մենէն մեծ մոլութիւնը, ցոյց կուտայ «Եսասիրութիւնը բարութեան երեւոյթով, գոռոզութիւնը խոնարհութեան զիմակին տակ, պարզ մտութիւնը հայելիի մէջ ուսումնասիրուած»:

Հիացումով կարգացած էր Ճօն Ռեօքսիլը «Գեղեցկութեան կրօնք»ին հեղինակը, որ անհուն կրքով մը կը սիրէ, կը պաշտէ ամէն ինչ որ բարութեան գրոշմը կը կրէ, եւ իր բովանդակ կեանքը նուիրած է ի խնդիր գեղեցիկին:

Տենդոտ յուզումով մը լափած էր նաեւ Թեմիսթոկլը որ հեշտաւ մրմունջ կը թրթռացնէ իր փափուկ քնարի սրտառու թիւրը եւ կը ջանայ մաքուր ու ազնիւ զգացումներ շնչել իր շահագէտ հայրենակիցներուն խստացած սրտերուն մէջ:

Ոչ նուազ ծանօթ էին իրեն նաեւ Հէրպերդ Սթենսէրի, Տարուինի, Հիւքսլէյի նման փիլիսոփայ գիտունները որոնք նոր թուիչ մը տուած են գիտութեանց:

Այն կեանքը որ կ'ապրէր ինք

թիւններ, եւ որբեր որդեգրելու համար առաջարկութիւն պէտք է ուղել մեր հասցէին:

Մ Ի Հ Ր Ա Ն Պ Ա Ղ Տ Ա Ս Ա Ր Ե Ա Ն
Հայկական Որբանոց
Ղ Ա Ա Ս Ա Ս Ր
Ս Ա Ն Մ Ա Ս Տ
(Բէրսիա)

Դրամ պարունակող նամակները եւ ծրարները պէտք է ապահովագրել:

Մնամ միշտ անձնուէր Ազգիս Միհրան Պաշտաստեալն

Ղալասար, Սալմաս, 6/18 Յուլիս 1898:

Դրամական նպաստ զրկել փափաքողներ, աւելի ապահով ըլլալու համար, կրնան Ատրպատականի Առաջնորդարանի միջոցաւ զրկել:

Ծ . Խ .

Պուրէշէն Արթ. հայր Մոսկոֆեան իրեն ուղղեալ հետեւեալ նամակը կը զրկէ մեզ նոյնութեամբ հրատարակելու խնդրանքով:

Ընթերցողը կը յիշէ անշուշտ «Տարագրեալ»ի եւ «Լուծֆի»ի վիճաբանութիւնը «Իրաւունք»ի մէջ յիշեալ Տէր հօր մասին:

Յօդան 20 Յուլիս 1898

Արժանապատիւ Ս. Հա՛յր
Ձիս ճանչցած էք եւ գիտէք թէ՛ ինչքան ազատասիտ եմ, ուստի եւ կրնաք երեւակայել, թէ՛ երբ սոյն տողերն ձեզ կը գրեմ, ուրիշ նըպատակ չունիմ եթէ ոչ բացառութիւն մը տալ:

Շարժում լրագրի յօդուած մը գրած էի. նախ հոն յայտնած էի որ՝ նպատակէս դուրս է Տ. Մոսկոֆեանի թարգմանութեանց խընսիրն պրպտել, քանի որ հին խընգիր մ'է, եւ ապա Պ. Սրմազաշեանի (Լուծֆի) ունեցած գաղափարը յիշելով, կաւեցնէի գէթ իմ ամենա-

մէկ քանի սրտակից ընկերներու հետ, կը համապատասխանէր իր ազնիւ ձգտումներուն որոնց իրականացման մէջ միայն պիտի կրնար ըմբռնել սրտի է՛ն մեծ գոհունակութիւնը. երջանկութիւնը Բայց անողոր դէպքերը ցիր ու ցանը իր շրջանակը եւ քանդ ու աւեր դարձուցին իր բոլոր իղձերուն մաքուր ոլորտը:

Հայ աշխարհը դրդող վերջին տրիւնտ անցքերուն առեւ, շատերուն հետ ինքն ալ իր հայրը վայրագ բարբարոսութեան զոհ տալով հաշիւ յաջողած էր նետուել արտասահման ուր, հետզհետէ, աշխարհի անուղղայ ցածութեանց վստահ՝ յուսահատ լուի վհատութեամբ համակուած, արցունքի օրեր կ'անցունէր անգործ ու անօգնական թափառելով:

Այն զուարթ, յուսալից երիտասարդին անուշ դէմքին վրայ հիմայ սեւամաղձ խորհուրդներու փխուր հետք մը նկարուած էր, սրտամորմոք դալկութիւն մը միայն կը հեւար հոն:

Վ. Շաիրիւսան (Շարունակելի)

կան համոզումն է որ Տէր Մուս-կոֆեան գործելու եւ իւր ազգայ-նոց օգտակար հանդիսանալու փա-րագ մը ունեցած է: Այսպէս վի-ճարանութեանց խնդիրն ալ կը մտածէի փակել տալ, և իմ հա-մոզումս կը գրէի»: Տ. Մուսկոֆե-անի միակ սխալն այս է որ, նա շատ աճապարած և իսկոյն ելած է թարգմանութիւններով պարսպե-լու, փոխանակ նախապէս հմտա-նալու քով կերպով լեզուին, և կամ հմուտ եղողներուն գիմելու:»

Յետոյ կաւելցնէի, Ազնիւ Պ. Սրմագաւազեանի եւ Տ. Մուսկոֆեա-նի վիճարանոցի մէջ խնդիրն վա-րդոց կարգադրութեամբ կը լինէր, երբ անոնց մէջ ատենաբանութիւնն որով սերմանող լրացումներն:

Ասկէ վերջ, մանրամասնօրէն և ընդարձակ կերպով պարզած էի Տ. Օհան Մանգակունիի թարգ-մաններէն Աղօթագրքի կնձառտ խնդիրն: Այս գրած էի «Ձղջում»-ի մասին:

Յաւելով տեսայ որ Շարժումի Պատ. խմբագրութիւնն յօգուածս նոյնութեամբ չէ հրատարակած, այլ միայն մէկ երկու մասերն աւ-փոփած է, յօգուածին ալ տարբեր ձեւ տուած. աղօթագրքի մասն, ամենէ կարեւոր կէտն, խիստ ա-ղօտ կերպով յիշած է, և Ձեզ նը-կատմամբ գրածիս միայն մէկ կողմն հրատարակած է, այնպէս որ ըն-թերցողն գուցէ կարծէ թէ՛ ուղ-ղակի ձեզ գէտ գրած լինելու հա-մար գրելիս ձեռք առած եմ:

Ձիս կը ճանչնաք, և գիտէք թէ՛ ամեն պարագայի ազգի շահն նկատողութեան կառնեմ, անձեռու հետ գործ չունիմ և կը գրեմ ա-ռանց անձնական շահեր և կամ բարեկամական նկատումներ աչաց տուելու ունենալու, և սակայն չեմ փափագիր որ իմ չըսածն ուրիշ-ներն ըսեն իմ բերնովս, կամ իմ գրածիս տարբեր գոյն տան:

Կը ցաւիմ որ իրաւունքի չը զրկեցի, կը կարծէի թէ՛ նոյնու-թեամբ պիտի հրատարակէին:

Այսօր Շարժումի խմբագրու-թեան գրեցի գիտողութիւններս:

Ասկէ վերջ, ո՛ր լրագրի ալ ե-թէ երբեք բան մը գրեմ, պիտի խնդրեմ որ կամ գրածս նոյնու-թեամբ հրատարակեն և կամ բը-նաւ չը հրատարակեն:

Յարգալի բարեւներս մատու-ցանելով, կրկին կը յայտնեմ թէ՛ ես իբրեւ անկախ և ազատ նկա-րագրի տէր և ճշմարտասօս, իմ մտածածն կը գրեմ ազատ կեր-պով և սակայն մինչդեռ ես աղօ-թագրքի մասին երկարօրէն գրած էի, Շարժումն այդ մասն բոլորո-վին կրճատած և յապաւած է, մի եւնոյն ժամանակ ձեզ նկատմամբ գրածներուս միայն մէկ կողմն ճը-րատարակած է, և ա՛յն ալ իւր բառերով:

Մնամ միշտ Ձեզ բարեացակամ վահրամ Մամիկոնեան

ՎԱՌՆԱԻ ԱՂԲԱՏԱԽՆԱՄ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Մեր նախընթաց թիւով հրա-տարակեցինք Պ. Թորոս փոխա-նանի ստորագրութեամբ նամակ մը որ տեղւոյս Աղբատախնամ Ըն-կերութեան Գործ. Ժողովոյ մի քանի անդամոց դէմ ամբաստանա-գիր մը էր:

Անշուշտ ամեն ոք առանց զգա-ծուելու չի կրցաւ կարգալ դաշն: Ամբաստանութիւններն բաւա-կան ծանր էին, մանաւանդ առա-ջինը, որ Գործադիր Ժողովոյ ան-դամներէն միոյն վրայ կը ծանրա-նար, պզգալի էր:

Աղբատախնամը, որ ըստ ինք-եան ամեն գովեստէ վեր լոկ բա-րեգործական հաստատութիւն մը էր և որ իր գոյութեան երկարա-միսնորուն մէջ հարկւարուոր հի-ւանդներ դարձանեց, այնչափ ար-տասուքներ սրբեց և վերջապէս այսօր այլեւս գոյութենէ դադրած է, իր անդամոց մեծագոյն մասը Պոլսկարիաէն մեկնած ըլլալով, կուգայ ենթարկուիլ այդ աստի-ճան ծանր ամբաստանութեան մը:

Մենք որ մինչեւ տարեգլուխ ըստ կարելոյն հետեւեցանք այդ ընկերութեան գործառնութեանց, հաշուեցուցակներն հրատարակե-ցինք, հետեւաբար ու ե քննա-դատութեան համար բաց ձգած էինք մեր սիւնակներն: Բայց մին-չեւ ներկայ տարւոյ սկիզբն, ոչ մի բողոք ոչ մի ամբաստանութիւն չի ներկայացուց ոչ մեզ, ոչ ընկերու-թեան ընդհանուր Ժողովոյ դիւա-նին, որոյ Ատենապետը ըլլալ կո-չուած էի: Եթէ փոքրիկ տրտուշ-ներ քիչ անգամ լսուէին, անմի-ջապէս անոնց առջեւ ալ կառ-նուէր. բայց ցորչափ Ընդհ. Ժո-ղովոյ գիւնը իւր ամբողջութիւնը չէր կորուսած այս աստիճան ծանր ամբաստանութիւն մը ոչ իրեն և ոչ մամուլին չէր ներկայացած: Ուստի մեր իրաւունքն է հարցնել ամբաստանողաց թէ, եթէ իրենց ըսածին նման զեղծումին ամենա-ծանրը գործուած է Աղբատախ-նամի գոյութեան սկիզբներն, ի՞նչ-չու իրենք ցարդ լուռ մնացած են, ի՞նչու չեն բողոքած և ի՞նչու չեն ամբաստանած այդ զեղծումին հե-ղինակն եղող Գործ. Ժողովոյ ան-դամը, երբ նա դեռ վառնափ փո-ղցներն կը չափոր և դեռ Պոլսկա-րիաէն չէր հեռացած: Քանի որ լուած են մինչեւ ցարդ իրազեկ ը-լալով այդ զեղծումին. միթէ ի-րենց այդ լուծութիւնը դատապար-տելի չէ՞: Եւ եթէ Գործ. Ժողով-ոյ Ատենապետը կը խոստովանի թէ իրեն ժամանակին իմաց տըր-ուած է, ինչու հրապարակ չի գար յայտնելու իրողութիւնը և իր ը-րած կարգադրութիւնը այդ մա-սին: Այո՛, սա կառարկէ թէ ներ-կայ տարւոյ Մարտ 1ին իրենք հրաժարած են, շատ լաւ, մենք ալ մինչեւ այդ թուականը զինքը պատասխանատու ճանչնալով է որ իրաւունք կը ստանանք իրեն հար-ցնելու թէ այդ զեղծումին դէմ ի՞նչ միջոցներ ձեռք առած է, զեղ-ծումը մինչեւ վերջ շարունակած է թէ ուղղուած է, այսինքն այդ Ատենապետի հոմանիսներն սկիզ-բէն ցովելով աղբատին հացը ձրիա-պէս կերած են թէ ոչ. ահա այս կէտին պարտաւոր է պատասխա-

նել Գործ. Ժողովոյ Պ. Ատենա-պետը:

Իսկ դալով Աղբատախնամի պա-հանջներուն: Պ. Ատենապետը մեզ յանձնած է մի ցանկ, որով ցոյց կուտայ թէ Ընկերութիւնը ութը անձերու վրայ 270 ֆրանքի չափ պահանջ ունի, որոնք իր պաշտօ-նավարութեան օրով դանձել աշ-խատած է ու չէ յաջողած:

Այդ դանձումը դիւրացուցած ըլլալու համար մենք կառաջար-կենք, որ պարտապաններն փոխան ընկալագրի մը իրենց պարտքերն հաճին վճարել Տիրա կ. Սանտալ-ճեանի, որ Աղբատ. Ընկերութեան Ընդհ. Ժողովոյ դիւանին անդամ էր:

Եւ բանի որ Ընկերութիւնը վե-րակազմելու համար առ այժմ՝ կամք կը պահուի, այդ պատրաստ և գան-ձելի դրամներն նպատակին դու-րածուելու համար պէտք է յանձնել տեղւոյս թաղ. խորհրդին:

Մարդ չէ կարող իր զայրոյթը զսպել, երբ տեսնէ այս տեսակ հանրագումար գործերու մէջ քիչ թէ շատ դատարարական անհատներ իսկ՝ մերթ հաճոյակատար ըլլալու տենչանքէն բռնուած թոյլ և քը-ծին շարժումը քննարկի, առիթ կու-տան ազգօգուտ ձեռնարկներու վրժման:

Յ. Գ.

«ԻՐԱՆԻՆՔ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Կ. Ք. Ի Քէօստէնձէ. — Ձեր նամակը ստացանք. Դուք Յուլի. 1էն սկսած էք թերթ ստանալ եւ վճարած էք մի-այն 7 ֆրանք:

Մեր թերթի տարեկան բաժնեգիրը արտասահմանի համար 14 ֆրանք է, 2 թիւը մէկ անգամէն զրկելու պայմա-նաւ: Իսկ ով որ զատ զատ ստանալ կուզէ, աւելորդ փոստի ծախքին փո-խարէն միայն 2 ֆրանք աւելի այսինքն 16 ֆր. պարտի վճարել, ինչ որ կան-խաւ քանիցս ծանուցած ենք: Ուստի Դուք ալ քանի որ զատ կ'ստանաք, մինչեւ 31 Դեկտեմբերի համար պար-տիք 9 ֆր. եւս վճարել:

ԼՐԱՔԱՂ

Բաղէշի նահանգին մէջ գործուած նոր խժողութեանց մասին Ռուս. Գոր-ծակալութիւնը Կ. Պոլսէն հետեւեալ հեռագիրը տուած է Յուլիս 26ին:

«Հիւպատոսներու տուած տեղեկու-թիւններէն կ'երեւայ, որ ոստիկանաց խումբ մը Ախլաթի գաւառին մէջ զէն-քեր եւ յեղափոխական հրատարակու-թիւններ փնտնելու ատեն հայերու վրայ բռնութիւններ ի գործ դրած է: Քիւրտերու աւարառութիւն ըրած ը-լալու լուրերը դեռ չեն հաստատուիր»:

Բիրթ. Վիդ., լրագրի տուած տե-ղեկութեան համեմատ, Բէթէրսպուրկի մէջ 730 ուսումնարանական հաստա-տութիւններ կան եղեր:

—Նոր-Գարի մէջ կը կարգանք. Ս. Էջմիածնից. — Յուլիս 22ին Նո-րին վեհափառութիւնը Բիւրական ամարանոցից կարեւոր գործերի համար դարձաւ Ս. Էջմիածին. առ այժմ որոշ չէ Նորին վեհափառու-թեան Տաթեւ գնալը. յիշուի պի-տի գնար, բայց փոքր ինչ տկար լինելով՝ ուղեւորութիւնը յետա-ձգուեց:

—Յուլիս 16ին ճանապարհուե-

ցին իրենց պաշտօնատեղերը Գե-րապատիւ Մարգարիտ եպիսկոպոս Տէրունեանը և Սահակ եպիսկոպոս Այվատեանը. առաջինը ինչպէս յայտնի է, նշանակուած է Թեհ-րանի և Հնդկաստանի առաջնորդ, իսկ երկրորդը՝ Ատրպատականի, Յուսով ենք, որ մեր պարսկահը-պատակ հայերը՝ աջակցելով իրենց նոր առաջնորդներին կը նպաստեն ընդհանուր գործին, հեռացնելով մէջտեղից ընդհանուրի օգտին վը-նաս բերող տարաձայնութիւնները:

—Յուլիսի 20ին, երկկոյնան տեղս հասաւ վանի ուսուցիչ նոր հիւպատոսը և միւս օրն առաւօտ-եան իգտիրի վրայով ուղեւորուեց վան:

—Ամերիկա բնակող մեր ազգա-յինք գովելի ջանք ցոյց կուտան որբերու նպաստի գործին, շատ քաղաքներ որբախնամ ընկերու-թիւններ կազմուած են: Ուսթը Մ'էսի Որբախնամ հանդէս մը կը պատրաստէ ի նպաստ որբերու. Քօնիւրտ քաղաքի փոքրաթիւ հայ գաղութը նոյն նպատակաւ ընկե-րութիւն մը հաստատած և 105 տղար զրկած է Պատրիարքարան:

—Եփրատ կը գրէ. —Կը մտա-ծուի որ Այվազովսի Շիքափօ արուեստահանդէսը այցելած մի-ջոցին Ս. Փրկիչ եկեղեցւոյ նուր-րած ծովանկարը, որ 200 տղարի արժողութիւն ունի, Ժողովրդի կողմէն գնելով, ի դիմաց Ուստի հայերուն նուէր տրուի քաղաքին նորակառոյց գեղարուեստից թան-գարանին:

—Պօսթօնի հայերն իրենց մէջ հանգանակութիւն մը ընելով, նոյն նահանգի կամաւոր զինուորաց նպաստի գործին մասնակցած են:

—Տ. Յովհաննէս Խուրանեանէ բարենպատակ հաստատութեանց համար կտակած 112000 ռուպլիի տոկոսով՝ որ 6000 ռուպլի կընէ, կովկասի մէջ որբանոց մը պիտի հաստատուի:

ՄՈՒՀԱՐԷՊԵ ՆԵԹԻՃԵՍԻ

Մուհարէպէ մէպտէն վէ ալէն ինսանիյէթին սէֆալէթին ինթաճ իտէն պիր հալ իսէտէ, պաղէնտէ հագսըզա հագգը թանրտան, դատ-տարլարը թէրպիյէ իտէն վէ մաղ-լումլարը, սէֆիլլէրի վէ մաղտուր-լարը գուրթարան եէգանէ պիր եօլ տըր:

Հուգուգը տիւվէլ (միջազգային օրէնք) գալիտէսինձէ՝ պիր տէվ լէթին զարարը տիկէր տէվլէթին ֆայիտէսի տիր. պիրինին մէնֆա-աթը տիկէրին մաղարրաթը, պի-րինին թէրագգը տիկէրին թէ-տէնինիսի հիւքմինտէ տիր: Պու գալիտէ իւզրէ՝ շու Սպանիա. Ամէ-րիգա մուհարէպէսինտէ, Սպանիա մաղլուպ օլմասը իլէ զարարա կի-րիթթար օլըյօր, պինպպէրին Ա-մէրիգալըլարտէ պաղը մէնֆաթթ-լար էլտէ իտէյօրլար, եանի պիր գաչ առալարա վէ պիր գաչ իս:

քելէ ետեւ ի իմանալու սահիւ
օլը յօրաւոր . հոգուգը տիւզէ մու-
հարեպէլէրին նէթիճէսինի պու-
թարգէլէ իզահ իտէր . զիրա մէզ-
քիր գանունըն նազարիաթը եա-
լընը տէվլէթլէրին հոգուգը մատ-
տիսի վէ պէգասը իզէրինէ պինա
օլընմըլ օլուպ , թապաանըն վէ
էհալինին իսթիրահաթ ու սուա-
տէթի օրատա իւշիւննի վէ տէօր-
տիւննի մէվգը թուլթապիլի :

Յագաթ ապէն տէվլէթլէր վէ
հիւքիւմէթլէր էհալինին ասայիշ
ու սաատէթի իշիւն թէշքիլ ու
թէշսիս օլընմըլ օլտըզլարընտան,
պիզ ասըլ միւսէպպիպի պուլընան
էհալինին վէ եախօտ ումուլըն մէն-
փաաթ ու մազարրաթընը բիշի
նազարա ալուպտէ մուհարէպէնին
նէթիճէսինի թէտգըզ ու թէֆ-
թիշ իթմէլիլի :

Պու Սպանիա-Ամէրիգա մուհա-
րէպէսինտէն , հէր իքի մուհարիպ
տէվլէթլէր թապաալտընըն ճանէն,
մալէն վէ պէտէնէն միւլթէզարըր
օլտըզլարը բէք աշիքեար օլուպ ,
թարիֆէ հաճէթ գալմազ : Լաքին
պուտուլէ պէրապէր պու մազար-
րաթ ալթընտան հէր իքի միւլթէթ
վէ պիւթիւն ինսանիյէթ իշիւն
մանէվի պիր մէնփաթ հուսուլա
կէլմիշ օլտըզլարէ ինքեար օլընա-
մազ , պու իսէ Սպանիա հիւքիւ-
մէթլինին զուլմը ալթընտան սէֆիլ
Գիւպալըլարըն զուրթուլմըլ օլ-
մասը տըր :

Իշթէ պու կիւն մուհարէպէ նէ-
թիճէսի օլմազ իզըրէ իքի տէվլէթ
թարափընտան իմզալանան բրօ-
թօքօլտա պիրիննի շարթ Սպա-
նիանըն Գիւպալը գալթիէն թէրք
իթմէսի տիր : Պուլտան սօնրա
Գիւպալըլար քէնտիլէրինէ վէ ա-
տայա սահիպ տիրէր , զայրը զա-
լիմին բէնշէի զուլմընտան գուր-
թուլտըլար : Սպանիա տէվլէթի
տախի լիքի սէնէ էվլէլ մէզքիւր
ատայա օրօնմի վերմէք իսթէմէզ
վէ թօք թիւֆէնք տարպէլէրի ի-
լէ սէֆիլ գալմըն մահքընա շա-
լըլըր իքէն , պուկիւն մուհարէ-
պէտէ պիւնիլէրէն ասքէր գըրտըզ-
տան վէ պիւթիւն տօնանմալարը-
նը տաղըտտըգտան վէ Գիւպալը
գալթիէն էլտէն չըգարտըգտան
պաշգա , Բօրթօ-Րիկէյը վէ սա-
յիւր պիր դաշ մուհիմ ատալարը վէ
իլիմանլարը տախի տիւշմէնէ թէրք
իթմէքէ մէճպուր օլտը :

Պու հալ Սպանիայ կիւզէլ պիր
տէրս օլտըլը միսիլիւ , թապաա-
սընը էզէն վէ միւք ու միւլթի
գըրուպ կէշիլէն թիւրք հիւքիւ-
մէթլինէ տէ պիր տէրս տիր :

Սապըն սօնու սէլամէթ օլտըլը
կիպի զալիմին սօնուտէ մահֆի-
յէթ տիր :

ՄԱԳԵԹՈՆԻԱ

Թանըն Սօֆիատան ալտըլը
մալիւմաթա կէօրէ , Մաքէթոնիա
գօմիթէլէրի շիհրի մէզքիւրտէ

պիր մէճլիս իտուպ , Պէրլին ահտ-
նամէսինի իմզալանան ալթը տէվ-
լէթլէրէ թագաթիմ օլընմազ իզըրէ
պիր պէյաննամէ գալէմէ ալմըշ-
լար : Իշպու պէյաննամէ Մաքէ-
թոնիա իշիւն Սուլթանըն հիւքիւ-
ալթընտա օթօնմի թալէպ իթ-
մէքտէ իմիշ :

1896 տա պու եօլտա պիր պէ-
յաննամէ Սօֆիա գօմիթէսի թա-
րափընտան հաղըլընմըլ վէ մէճ-
լիսի ումուլիտէն գապուլ օլընմըլ
օլուպ , մաալը աթիտէքի նօգթա-
լարտան իպարէթ տիր :

1. Սէլանիք , Մանասթըր վէ
իւսքիւպ վիլայէթլէրի պիրէշտիր-
մէք վէ Սէլանիք շէհրիսի մէքքէ-
զի իտարէ իթմէք :

2. Էհալինին էքսէրիյէթիլին
թէշքիլ իտէն միւլթէթտէն պիր վա-
լի թային իթմէք :

3. Միւլթիւր էյալէթիլին պիւտ-
ճէսինի թային ու թէրթիպ իթ-
մէք վէ գաղիֆէսի իլէ միւլթէլէֆ պիր
մէճլիսի ումուլի ինթիլապ ու
թէշքիլ իթմէք :

4. Էյալէթիլին մուհափազա ու
ասայիշի իշիւն եէրլի ինթիլաթ
ասքէրի (միլիսիա) թէրթիպ իթ-
մէք , վէ սաիրէ :

Իշպու պէյաննամէ ումուլ Մա-
քէթոնիա գօմիթէլէրինտէն թահ-
լը գարաւա ալթընտըտան սօնրա
պիր միւսիսիպ սըրատա անը տէվ-
լէթլէրէ հօլլամազ խըտմէթի Սօ-
ֆիա գօմիթէսինէ իհալէ օլընմըլ
իսէտէ , շիմտիլիք , Մաքէթոնիա
մէսէլէսինի գարըշտըրմադ նէ
Պուլկար հիւքիւմէթլինէ վէ նէ
Րուսիայա խօշ կէօրիւնմէյէճէք
տէյու թէշէլիլ իտիլմիշ տիր :

ՄԻՒՍԱԼԷՀԱ

Իմզա օլընտան միւսալէհա բրօ-
թօքօլընտան տօլայը Սպանիա կա-
ղէթալարըն չօլը խօշնուլթսըլըզ
պէյան իտէյօրալար : Պաղըսը տէ-
յօր , զայրը Սպանիա իւշիւննի սը-
նըֆ տէվլէթլէր սըրատա կիրտի
(պու կաղէթալարըն նէշիլ հիւքիւ-
մէթտէն մէնն օլընմըլ տըր) , տի-
կէրլէրի ատալար էլտէն կիթտիք-
տէն սօնրա պիրիմ թիճարէթ մէն-
պալարը քէսիլմիշ տիր տէյօրալար
Խուսուլմէթ գալթիէն նիհայէթ
պուլտը իսէտէ , ալաֆրանգա Օ-
գոստոս 13 տէ Ամէրիգալըլար մու-
հարէպէ իլէ Մանիլայը Սպանի-
լարտան գալթ իթտիլէր :

Յագաթ շիմտի հէր թարափտա
խուսուլմէթ նիհայէթ վէրիլմիշ
տիր : Ատալարըն պօշաթըլմասընա
նէզարէթ իտէճէք օլան մէմուլար
հէր իքի տէվլէթ թարափընտան
թային օլընմազտա տըրլար :

Բօրթօքօլտա Ֆիլիպին ատալա-
րը իշիւն միւսարրահ պահս պու-
լընմաթըլը սէպէպլէ պիր զըտտի-
յէթ զուհուրա կէլմէսինտէն գօր-
գուլմազտա տըր :

ՄԻԹԵՆԷՎՎԻԷ

— Պուլկարիանըն սապըզ Բրէնսի
վէ սապըզ վիւքէլա բէյիսի Մ-
Սթանպուլօֆ էսնասընտա իսթի-
լալ չըգարուպ տէ Րուսիայա գաշ-
մըլ օլան 48 պուլկար վապիթլէ-
րինտէն 4 ի կէշէն սէնէ , 13 ի պու-
սէնէ պաշընտա պուլկար օրտու-
սընտա եինէ քէնտի մէսլէքլէրինէ
կէշմիշլէր վէ 25 ի տախի պու 3-4
հաֆթա զարփընտա կէշէճէքլէր
իսէ տէ , միւլթէպազը 6 զապիթ
միւլթէհիմ պուլընտըլարը սէ-
պէպլէ սիւքի ասքէրիյէն գապուլ
օլընմազազլարը ըմըլ :

— Թէհրանտա էհալի Րուս գօն-
սօլօսիանէսի էօնիւնտէ պիրիքիպ
էքմէք իսթիլի տէյու պաղըրմըլ-
լար վէ վէլլէլէ չըգարմըլլար , պու
սէպէպտէն չարըլար վէ տիւքեան-
լար գաբանմըլ տըր :

— Չանկհայտան Տէյի Մալըն
մուլպիրինին պիւլիտիկինէ նա-
ղարէն՝ Րուս վէ Չին տէվլէթլէրի
պէյինտէ ինկիլթէրայա գարըլ
կիլիլ պիր ահմամէ իմզալանմըլ
օլտըլը շիմտի Մէյտանա չըգմըլ
տըր : Թան պու հալաթիսէ էհէմ-
միլիթ վէրմէք իսթմէյօր :

— Պուլկարիանըն Սթանպուլ ա-
ճէնթի Մ- Մարքօֆ թաթարէօյ
(թիւրք-Պուլկար սինօրը) վուգու-
աթընտան տօլայը Պապը-Ալիյէ
պիր նօթա վէրուպ , թիւրքլէրին
գապթ իթտիլէրի մահսուլարը
կէրի իսթմէլ վէ կէօմիւք մէսէ-
լէսինին պիւլա թէշէլիլ հալլ օլըն-
մասընը իտտաա իթմիշ տիր :

— Սթանպուլըն մուլպիրի Տի-
յունը Ումուլիլէ վէ Պապը Ալի
պէյինտէ միւնաղաա զուհուրինի
չու եօլտա իզահ իթմէքտէ տիր :
Պուլտան էվլէլ թիւրքիա Րուս
թուղմինալթըն էօտէմէք իշիւն
Ալմանիատան 300,000 լիրա իս-
թիգրազ իտուպ , Տիյունը Ումու-
միլիլէ քէֆիլ կէօսլէրմիշ . շիմտի
տախի 1,000,000 լիրա Ալմանիա-
տան էօտիւնն ալմազ իշիւն Տիյունը
Ումուլիլիյէն քէֆալէթ իթտիլմէք
իսթիլար իսէ տէ : պու քէֆիլ օլ-
մազ իսթմէթիկինտէն զըտտիյէթի
էֆքեար հուսուլա կէլմիշ օլուպ ,
Սաթարազմ մէզքիւր իտարէ իլէ
միւնասէպաթը գաթ իթմէք թէհ-
տիտաթընտա պուլընը ըմըլ :

— Գանիատա (կիրիտ) գալթիյէ
իտարէսի թէշքիլ իթմէք իշիւն
Ֆրանսատան 40 ժանտարմ վէ 2
գապիթ կէլմիշ տիր :

Գանիա եաղընլարընտա պիր
խրիսթիյան չէթէսի պիր իսլամ
էօլտիւրմիշ վէ հայլմանաթ սիւր-
միշ օլտըլընտան իսլամլար տախի
ախզը ինթիգամ իշիւն պիր խրիս-
թիյան քէսիլլէր :

— Լօտարանըն պիր թարափընտա
կէշէն կիւն 4 էօլիւ պուլընտը .
պուլարըն իքիսի 13 վէ 11 եա-
լընտա չօնուզլար վէ իքիսի 4 վէ
1 պուլուք եաղընտա գըլլար օլուպ
տէօրտիւ պիր գարտաշ ըտըլար :

Բօլիցիգ պու էօլէնլէրին պապասը
օլան 70 եաղընտա լէյլթն Մար-
թէս նամ շախսը թուլթուպ իս-
թինթազ իթտի : Իսթիլար իս-
թինթազընտա էօլէնլէր քէնտի
էվլաթարը վէ գաթիլիտէ քէնտիսի
օլտըլընը սէօլլէմիշ : Պու ճիւնայէ-
թին սէպէպի սօրըլտըլընտա իս-
թիլար ճէվապէն . — Պիր սէնէտէն
պէրու իշիլ գալտըմ . սէֆալէթ
էն սօն տէրէճէյէ կէլտի , էվլաթ-
լարըմը պէսլէմէք վէ թէյայիւշ
իթմէք իշիւն ասլա իւմիտիմ գալ-
նատը տէմիշ տիր :

Մէրգուլ գաթիլ վէ սէֆիլ բէ-
տէրին մուհաքէմէսի եաղընէն իճ-
րա օլուհանազ տըր :

— Աճէմիսթանտա պուլընան
50000 խանէ Նէստորիլէրի Րուս
քիլիսէսինէ իտալ իթմէք մէմու-
րիլէթի իլէ թէշքիլ օլընմըլ օլան
հէյէթ Մար Յովհան ասորի ե-
պիսկոպոս և Թէնֆիլալտ վարդա-
պետ ըէֆազաթը իլէ Թիֆլիստէն
Երեւան , Զուլֆա թարիգինտէն
Աճէմիսթանա միւլթէվէտիհէն հա-
րէքէթ իթմիշ տիր :

— Շուշիտէն Նոր-Դարա եաղը-
լան մէթլուպէ պինայէն , պիր բա-
րաս 9 եաղընտա պիր գըլը 40
եաղընտա պիր ատէմ իլէ պսակ
իթմիշ : Էվէր պու հալաթիստէ
եանլըլըզ եօգ իսէ , հէր հալտէ
մէրգուլ բաբասըն՝ նիզամէն վէ
մէզհէպէն՝ ճէզալանմասը լաղըմ
կէլէճէք տիր :

— Երուսաղիմի սապըզ վիւ-
քէլա բէյիսի Ասիինին պիր մու-
հարրիլ իլէ կէօրիւշմէսինտէ տէ-
միշ տիր «Սուլթան պէնի հուզու-
լընա գապուլ իթմէսինտէ՝ Եու-
նանիսթան վէ Թիւրքիա պէյին-
տէ եաղընիլթ վէ տօսթլըզ հու-
սուլա կէթիւրմէք արզու իտէրիմ
տէտի » :

ՐԵՃԱ

Սէնէի հալիլէնին եէտիննի ալը
իսթամ պուլմազտա օլտըլը հալ-
տէ պու կիւնէ գատար իյֆաի տէյն
իթմէյէն հիւքիւմէթիւ ապօնէլէրի-
միլին պիւլա թէշէլիլ ապօնէ պէ-
տէլինի իտարէլանէմիլզէ կէօն-
տէրմէլէրի մէրճու վէ միւսթէրհամ
տըր :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ
ԵՐԳԱՐԱՆ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ
Կ Ա Ս
Դասագիրք ընթերցանութեան
Ի Պ Է Տ Ս
ՓՈՐՐԻՆ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը , իր տեսակին մէջ
տաղիւնն որ լոյս կը տեսնէ հայերէն
լեզուով , կը պարունակէ մանկական
գուարճալի երգեր ու քանի մը ոտա-
նաւոր առակներ եւ կրնայ երախայնե-
րուն ծառայել նաեւ իբր ընթերցա-
նութեան գիրք որուն պարունակու-
թիւնը գրօնեցողիչ եւ հրահանգիչ է
միւնազամայն անոնց համար :

Թուղթը ընտիր է , տպագրութիւնը՝
մաքուր եւ կազմը վայելուչ :

ԳԻՆ 80 ՄԱՆԹԻՄ
Կը ծախուի , վառնա , Արեւելեան
ձաքարն , 2րդ. թաղ , թիւ 1104 :